ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«17» մարտի 2015թ. N 1

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՆՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Նույն օրենքի N 1 հավելվածի 3-րդ գլխի 2-րդ մասին համապատասխան, եթե վճարման փաստաթղթերում (անդորրագրում, վճարման հանձնարարականում) հարկ վճարողի կողմից նշված է, թե գումարը որ հարկային պարտավորության մարմանը պետք է ուղղվի (կատարվել է նպատակային վճարում), ապա պարտավորությունների և հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարումը կատարվում է՝ հաշվի առնելով նպատակային վճարումը:

Օրենքի վերոնշյալ դրույթների կիրառության հստակեցման նպատակով, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 88-րդ հոդվածով՝ ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

Այն դեպքում, երբ հարկ վճարողի կողմից որևէ հարկատեսակի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների) գծով կատարվել է վճարում՝ ուղղված ապագա պարտավորությունների մարմանը և նույն հարկատեսակի (կամ առևտրի հարկի, հաստատագրված վճարների) գծով ունի պարտավորություն, ապա կիրառվում է N 1

հավելվածի 3-րդ գլխի 3-րդ մասի դրույթները: Սույնը չի տարածվում հաշվետու ժամանակահատվածը լրանալուց հետո կատարվող այն վճարումների վրա, որոնց մասով հաշվարկները հարկային մարմիններ դեռևս չեն ներկայացվել, ինչպես նաև շահութահարկի և եկամտային հարկի գծով կատարվող կանխավճարային մուծումների վրա:

Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ԲԱԼԱՅԱՆ**